ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
պրն Լ. Հ. Մկրտչյանին

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
Բորիս Մանթաշի Մակիչյանից

ք. Երևան, Ալեք Մանուկյան 15, բն. 9, հեռ. 091-20-91-52
e-mail: makichyan@mail.ru

<Երևանի Հյուսիսային համալսարան> ՍՊԸ
Գրանցման համարը 273.110.01549

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Համալսարանի կանոնադրության պետական գրանցման համարը:
2. Ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ:
3. Մոտիվացիոն նամակ հիմնավորում՝ հանրային խորհրդում ներգրավման աշխատանքներին մասնակցության վերաբերյալ:
4. Հակիրճ վերլուծություն վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ:

Դիմող՝ Բորիս Մանթաշի Մակիչյան

,,____,, _____ 2016թ.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք № 32323-16
«20» 11 2016թ.

Ամփոփ տեղեկանք
վերջին 2 տարում Բ. Մ. Մակիչյանի ծավալած գործունեության վերաբերյալ

1996 թվականից մինչ օրս Բորիս Մանթաշի Մակիչյանը Երևանի Հյուսիսային համալսարանի ռեկտորն է: Հյուսիսային համալսարանը բարձրագույն ուսումնական հաստատություն է, որը հիմնադրման օրվանից հավատարիմ է բուհի առաքելության մեջ ձևակերպված հետևյալ սկզբունքներին՝

- մատուցել որակյալ և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթություն, մշակել շուկայամետ մասնագիտական կրթական ծրագրեր,
- աշխատել ազնիվ, թափանցիկ և օրինապաշտության մթնոլորտում,
- վերապատրաստումների միջոցով հզորացնել բուհի մարդկային ու մասնագիտական ռեսուրսները,
- բարելավել բուհի նյութատեխնիկական հագեցվածությունը, ակտիվացնել բուհի արտաքին կապերը,
- ակտիվացնել գիտահետազոտական աշխատանքները,
- ստեղծել Գիտության և նորարարության կենտրոն, որը ամբիոնների հետ միասին կպլանավորի և կիրականացնի արդի պահանջներին համապատասխան հետազոտություններ,
- հետազոտական աշխատանքում ներառել զալցբուրգյան սկզբունքները,
- որոշ մասնագիտությունների գծով բացել ասպիրանտուրա,
- ակադեմիական մոբիլության միջազգային ծրագրերում մասնակցելու համար ուսանողների և դասախոսների համար պարբերաբար անցկացնել օտար լեզվի և համակարգչային գիտելիքների ինտենսիվ դասընթացներ:

Ռեկտոր Բորիս Մակիչյանն ակտիվորեն է արձագանքել բարձրագույն դպրոցի զարգացման ներկա բարդ ու բեկումնային փուլում համակարգի առջև ծառացած խնդիրների քննարկմանն ու օպտիմալ որոշումների որոնմանը: Այս հարցերը և հիմնախնդիրները շոշափող հոդվածներով ու հրապարակումներով նա հանդես է եկել մամուլի էջերում ու հեռուստատեսությամբ: Մասնավորապես, վերջին երկու տարվա ընթացքում Բ. Մակիչյանը հանրապետական մամուլում (<Հայաստանի Հանրապետություն> օրաթերթ, <Կրթություն> և <Իրավունք> շաբաթաթերթեր) հրապարակել է մեկ տասնյակից ավելի հոդվածներ (<Հավատանք և վերադարձնենք լավագույնը>, <Ազգային բարձրագույն դպրոցի կատարելագործման ուղիները>, <Ժամանակին համաքայլ>, <Մեր հիմնական նպատակը հայրենահզորացումն է>, <Հայոց ցեղասպանության միջազգայնորեն ճանաչման (դատապարտման) արժևորման անհրաժեշտությունը>, <Հյուսիսային

համալսարանը օրենքի գերակայության ջատագով>, <Նաև մտավոր հրանոթի> միջոցով (G-100) ծրագիր> և այլն):

Վերոնշյալ հարցերի վերաբերյալ Բ. Մակիչյանի անմիջական նախաձեռնությամբ Հյուսիսային համալսարանում անցկացվել են նաև միջբուհական ու միջազգային գիտաժողովներ, կլոր սեղան-բանավեճեր, որոնցում նա ակտիվորեն մասնակցել է բուհական կյանքի տարբեր պրոբլեմների քննարկմանը, հանդես է եկել բուհերի գործունեությունը բարելավելու և նրանց աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու վերաբերյալ արժեքավոր առաջարկություններով:

Հիշատակության է արժանի 2015-ի ապրիլի 21-22-ը Հյուսիսային համալսարանում կազմակերպված միջազգային գիտաժողովը «Ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները» խորագրով: Գիտաժողովին մասնակցել են աշխարհի շուրջ 3 տասնյակ երկրների՝ Հյուսիսային համալսարանի հետ համագործակցող բուհերի գիտամանկավարժական կադրեր:

Դեռևս 2012 թվականին Բորիս Մակիչյանը հանդես է եկել հետաքրքիր և ազգօգուտ մի նախաձեռնությամբ՝ 2016 թվականին մեծ շուքով նշել Սանահինի համալսարանի 1050-ամյակը: Չորս տարվա ընթացքում իրականացվել են տարբեր միջոցառումներ՝ այցելություններ Լոռու մարզ, հանդիպումներ համալսարանի <Թումանյան> բաժանմունքի ուսանողների հետ, ծառատունկ և այլն: Հյուսիսային համալսարանում նոյեմբերի 22-23-ին անցկացվել է Սանահինի համալսարանի 1050-ամյակին նվիրված <<**Հայաստանը՝ տարածաշրջանային գիտակրթական կենտրոն**>> խորագրով միջազգային գիտաժողովը, որին մասնակցել են գիտնականներ աշխարհի տարբեր բուհերից:

Հաշվետու տարիների ընթացքում Հյուսիսային համալսարանում կատարվել են կրթության որակի բարձրացմանը միտված բազմաթիվ այլ աշխատանքներ ևս, որոնցից են՝

1. 2013թ. Հյուսիսային համալսարանը ընդգրկվել է Եվրամիության «Տեմպուս» ծրագրի երկու նախագծերում: ՏԵՄՊՈՒՍ- VERITAS-ի՝ «Երրորդ ցիկլի կառուցվածքային զարգացումը Զալցբուրգի սկզբունքների հիման վրա» ծրագրով բարելավվել է հետբուհական կրթությունը Եվրոպական որակավորումների շրջանակին և Զալցբուրգյան սկզբունքներին համապատասխանեցնելու միջոցով: Ծրագրի շրջանակում բուհերի միջև կազմակերպվել են համատեղ սեմինարներ, փոխադարձ այցեր, մշակվել են հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր: ՏԵՄՊՈՒՍ–GOVERN «Կառավարման համակարգի արդյունավետ կառուցվածքային փոփոխությունների իրականացումը Բոլոնիայի սկզբունքների հիման վրա» ծրագրի շնորհիվ բուհը կատարելագործել է իր կառավարման համակարգը:

2. Հյուսիսային համալսարանում իրագործվել է 4 դրամաշնորհային ծրագիր՝ Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» Էրազմուս-Մունդուս ծրագրի ԷՄԻՆԵՆՍ շարժունության նախագիծ, որի շրջանակում համալսարանը համագործակցել է եվրոպական 7 լավագույն բուհերի հետ՝ Լեհաստանի Ադամ Միցկևիչ համալսարանի, Շվեդիայի Մալմոյի համալսարանի, Ֆրանսիայի Մոնպելյե 2 համալսարանի, Իտալիայի Տուրինի համալսարանի, Պորտուգալիայի Պորտոյի համալսարանի, Իսպանիայի Ռովիրա-Վիրգիլիայի համալսարանի, Ռումինիայի Բաբեշ-Բոլյայի համալսարանի հետ:

Հաշվետու շրջանում Էրազմուս-Մունդուս ծրագրի շրջանակում Հյուսիսային համալսարանը համագործակցել է նաև Արևելյան համագործակցության երկրների՝ Վրաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Մոլդավայի մի շարք բուհերի հետ:

Բուհի որակի ապահովմանը միտված հրատարակվել են հետևյալ ձեռնարկները՝ <<Որակի ապահովման>> ձեռնարկ, <<Ուսանողի ուղեցույց>>, մեթոդական տարաբնույթ գրքույկներ:

Հավուր պատշաճի է գնահատվել նաև Հյուսիսային համալսարանի ռեկտոր Բ. Մակիչյանի գիտամանկավարժական վաստակը արտերկրի բուհերի կողմից: Այսպես, 2013-ի փետրվարին նա արժանացել է Մոսկվայի սոցիալական գիտությունների ինստիտուտի և Ռուսաստանի ազգային հումանիտար համալսարանի (Սանկտ Պետերբուրգ) պատվավոր պրոֆեսորի կոչումների՝ ակտիվ միջբուհական համագործակցություն կազմակերպելու համար: Բ. Մակիչյանը պարգևատրվել է նաև Կրթության և գիտության նախարարության և Երևանի քաղաքապետարանի ոսկե մեդալով և բազմաթիվ պատվոգրերով: Նա <Լոռվա ձոր> ՀԿ-ի պատվավոր նախագահն է և Ալավերդու պատվավոր քաղաքացի:

Մոտիվացիոն նամակ-հիմնավորում՝ հանրային խորհրդի աշխատանքներում ներգրավվելու վերաբերյալ

Կարևորություն տալով ՀՀ ԿԳ նախարարությանը կից հանրային խորհրդի գործունեությանը, ինչպես նաև հաշվի առնելով, որ նշված խորհրդում կքարձրացվեն հարցեր, որոնք կնպաստեն ՀՀ-ում կրթական համակարգի բարելավմանը և կատարելագործմանը, կրթության բնագավառում նոր և արդյունավետ քաղաքականության մշակմանը և ՀՀ-ում կրթության որակի բարձրացմանը, բուհերի միջև իրավահավասար պայմանների ապահովմանը, կարծում եմ, որ Երևանի Հյուսիսային համալսարանի ռեկտոր Բորիս Մանթաշի Մակիչյանի մասնակցությունը նշված խորհրդի աշխատանքներում կլինի արդյունավետ, որովհետև կրթության բնագավառում նրա բազմամյա աշխատանքային փորձը, ոլորտին առնչվող խնդիրներին նրա բազմատեղյակությունը, ինչպես նաև մասնավոր բուհական համակարգում 20-ամյա ղեկավարման փորձը կնպաստեն վերոնշյալ հարցերի լուծմանն ու բարելավմանը:

Բորիս Մակիչյանի մասնակցությունը ՀՀ ԿԳ նախարարին կից հանրային խորհրդում կարտահայտվի հետևյալ սկզբունքներով՝

ա) ՀՀ կրթության դաշտում միասնական և համահավասար օրենսդրական դաշտի ապահովում և կիրառում,

բ) կրթության ոլորտում ազնիվ մրցակցային պայմանների ապահովում,

գ) կրթության ոլորտի որակի ապահովման մեխանիզմների ստեղծում,

դ) ՀՀ կրթական համակարգի թափանցիկ աշխատանքի քաղաքականության մշակում,

ե) իրավահավասար պայմաններ կապահովվեն ոչ պետական(արդիական)և պատական բուհերի միջև:

Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

ՀՀ կրթության և գիտության նախարարության վերջին երեք տարիների գործունեությունը ընդհանուր առմամբ կարելի է գնահատել դրական, քանի որ կատարվել են բազմաթիվ գործնական քայլեր, մշակվել և համապատասխան մարմիններում ընդունվել են ոլորտը կարգավորող իրավական ակտեր: Նշյալ ժամանակահատվածում Կրթության և գիտության նախարարությունը հաջողությամբ շարունակել է մինչև այդ սկզբնավորված ՀՀ կրթության համակարգի միջազգայնացման գործընթացը, գումարվել են միջազգային գիտաժողովներ, հանդիպումներ և այլ միջոցառումներ: Մասնավորապես 2014թ. ԵՊՀ-ում անցկացվել է EURASHE-ի հերթական համաժողովը:

Ծաղկաձորում և Աղվերանում անցկացվել են բազմաթիվ միջազգային հանդիպումներ ամենատարբեր հարցերի քննարկման նպատակով (<Բարձրագույն կրթության մասին> ՀՀ օրենքի նախագծի քննարկում, կրթության բնագավառում հակակոռուպցիոն ծրագրերի քննարկում և այլն):

ՀՀ ԿԳ նախարարությունը հաջողությամբ է իրականացրել նաև Բոլոնիայի գործընթացի քարտուղարության լիազորությունները:

Պետք է նշել, սակայն, որ կրթության համակարգի օրենսդրական փոփոխությունները ոչ միշտ են համապատասխանել օրենքի գերակայության և ժողովրդավարության ռազմավարությանը: Դեռևս շարունակվում են բազմաթիվ կարևոր օրենսդրական նորմերի անտեսումները, այսպես, օրինակ խախտվում են <<Բարձրագույն կրթության և հետբուհական կրթության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ՝ <<Ընդունելությունը բուհի իրավասությունն է>> և 13-րդ հոդվածի 12-րդ կետը, այն է. <<Բարձրագույն ուսումնական հաստատության տված ավարտական փաստաթղթում (դիպլոմում) նշվում է ուսումնական հաստատության, դրա առանձին մասնագիտության հավատարմագրված լինելու փաստը>>, ինչպես նաև տարիներ շարունակ չի կատարվել <<Կրթության մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետը:

Օրենքի տառին և ոգուն համապատասխան աշխատող բուհերը ոչ միշտ են արժանացել օբյեկտիվ գնահատականի և հաճախ նախապատվություններ են շնորհվել օրինախախտ բուհերի: Հատկապես այդ տարիներին շատ հաճախ խախտվել են <<Բարձրագույն և հետբուհական կրթության մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 9-րդ կետը, այն է. <<Ուսումնական հաստատության և դրանց կողմից տրվող ավարտական փաստաթուղթը իրավահավասար կարգավիճակի ապահովումը կրթության ոլորտում պետական քաղաքականության սկզբունք է>>, մինչդեռ պետական միջոցներով ուսուցման իրավունք տարիներ շարունակ տրվում է միայն պետական բուհերին, անտեսելով նույնիսկ 2010-ի հոկտեմբերի 28-ին <<Կրթության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ և <<Բարձրագույն և հետբուհական կրթության մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածներում կատարված լրացումները, այն է. <<Այլ մասնագիտությունների հավատարմագրման

ծրագրեր ունեցող ոչ պետական բուհերում մրցութային հիմունքներով կարող է իրականացվել բարձրագույն և հետբուհական մասնագիտական անվճար կրթություն պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ>:

Միայն օրենքի գերակայության պայմաններում մեր բուհական համակարգը կզարգանա և Հայաստանի Հանրապետությունում կրթություն ստանալը կդառնա գրավիչ նաև արտերկրի ուսանողության համար: Միայն այդ դեպքում մեր հանրապետությունը կվերածվի տարածաշրջանային գիտակրթական կենտրոնի: